

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ - ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն

«Հաշվետվություններ Կոնվենցիաների» ԳԷՀ դրամաշնորհ

«Ազգային կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայման և կոնվենցիայի ներկայացվելիք՝ Հայաստանում կենսաբանական բազմազանության մասին 5-րդ ազգային հաշվետվության կազմման» դրամաշնորհային ծրագիր

ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ No. TF013529

Project ID 143212

Խորհրդատվական ծառայության անվանումը՝ «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի պատրաստում եվ «Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ազգային ռազմավարության եվ գործողությունների ծրագրի» վերանայում խորհրդատվական ծառայություն:

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ RNBS C-1.1

Հայաստանի Հանրապետությունը ՀԲ-ից ստացել է «Հաշվետվություններ Կոնվենցիաների» ԳԷՀ «Ազգային կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայման և կոնվենցիայի ներկայացվելիք՝ Հայաստանում կենսաբանական բազմազանության մասին 5-րդ ազգային հաշվետվության կազմման» դրամաշնորհային ծրագիր և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների մատուցման դիմաց:

Ծրագրի նպատակն է՝

1. վերլուծել Հայաստանի կենսաբազմազանության 4-րդ ազգային զեկույցից հետո մինչև 2013թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «Կենսաբազմազանության մասին» Կոնվենցիայով և Կոնվենցիայի Կողմ երկրների 10-րդ և 11-րդ կոնֆերանսներում ընդունված որոշումներով Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացները և պատրաստել Հայաստանի կենսաբազմազանության 5-րդ ազգային զեկույցը,
2. նպաստել Հայաստանի կենսաբազմազանության վերաբերյալ առկա տեղեկատվության ամփոփմանը,
3. վերլուծել կենսաբազմազանությանը սպառնացող վտանգների պատճառները,

4. նպաստել մինչև 2020 թվականը կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման իրատեսական ռազմավարության և գործողությունների ծրագրի պատրաստմանը,
5. ապահովել կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծի քննարկումներում բոլոր շահագրգիռ կողմերի արդյունավետ մասնակցությունը:

Առաջադրանքի կատարման ժամանակահատվածն է մոտավորապես 510 օր:

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը համապատասխանող *Խորհրդատվական ընկերություններին (այսուհետ՝ Խորհրդատուներ)* հրավիրում է ներկայացնել Ծառայությունների մատուցման հետաքրքրվածության հայտ: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ՝ ցույց տալով, որ վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ:

Կարճ ցուցակում ներգրավման (shortlisting) չափանիշներն են.

- Առաջադրանքի ոլորտում խորհրդատվական ընկերության ընդհանուր փորձը (տարի),
- Խորհրդատուն պետք է ունենա բնապահպանական գործառնական ուղղվածության նվազագույնը 5 տարվա գործունեություն, բնապահպանական ծրագրերի իրականացում,
- Աշխատանքային փորձ միջազգային կազմակերպությունների և միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերում,
- Խորհրդատվական փորձը ԵԿԱ տարածաշրջանում:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի հունվարի 11-ի «Ուղեցույցի՝ ՎՋՄԲ փոխառությունների եւ ՄՋԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների տեսքով կամ որպես ենթախորհրդատուներ՝ իրենց որակավորումը բարելավելու համար:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի ՀԲ-ի Խորհրդատուների Ուղեցույցներում սահմանված «Խորհրդատուների որակավորում ընտրության» մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ստորև ներկայացված հասցեով աշխատանքային ժամերին՝ 09:00-ից - 18:00:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացվող հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ ֆաքսով, կամ էլ-փոստով) մինչև 2014 թ.-ի հունվարի 29-ը, ժամը 18:00:

պարոն Վիկտոր Մարտիրոսյան

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի տնօրեն,

ՀՀ բնապահպանության նախարարություն

ՀՀ, ք. Երևան, Արմենակյան 129, 0047

Էլ-փոստ՝ info@cep.am

Հեռ՝ +37410 65 16 31

Ֆաքս՝ +37410 65 00 89